«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԺՊ՝ ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ……էջ 3

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ……էջ 4

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ……էջ 5

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ……էջ 7

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ: ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ: ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ……էջ10

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ……էջ25

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ……էջ27

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ……էջ38

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ……էջ46

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ

ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՈՒԹՀՄ / SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……էջ 48

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ……էջ 57

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ……էջ 58

ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ……էջ 60

ՆԱԽԱԲԱՆ

2021-2022 ուսումնական տարվա հաշվետվության հիմնական նշաձողերը վերցվել են ըստ ԿԳՄՄՆ նախարարի մեթոդական ուղեցույցի (2022թ. 22.11 հրամանի), որը ներկայացնում է բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության **կատարողականի արդյունքային ցուցանիշների (KPI) ներդրումը:** Ցուցանիշները հնարավորություն են ընձեռելու ձևակերպել ֆակուլտետի առաջնահերթություններն ընտրված ժամանակահատվածի համար և հարաբերակցել դրանք բուհի առաջնահերթություններին, ինչն ինքնին կարևոր և օգտակար գործընթաց է ֆակուլտետի զարգացման հետագիծը հստակեցնելու տեսանկյունից: Ցուցանիշների պրակտիկ օգտագործումը հնարավորություն է տալու՝

- ✓ պարզելու ֆակուլտետի ձեռք բերված արդյունքների ընթացիկ և շարունակական վերլուծության և անհրաժեշտության դեպքում բարելավման հնարավորությունը,
- ✓ իրականացվող գործընթացների թափանցիկությունն ավելացնելու հնարավորությունը,
- ✓ գործընթացում ներգրավված անձնակազմի աշխատանքի շարունակական բարելավման հնարավորությունը:

Հասարակական գիտությունների ֆակուլտետը ձևավորվել է 2022թ. կառուցվածքային փոփոխությունների արդյունքում:

Ֆակուլտետը ՇՊՀ-ի գիտակրթական գործունեություն ծավալող կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներից է, որը համակարգում է բարձրագույն կրթության մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով՝ իննական մասնագիտություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում 2021-2022 հաշվետու ուսումնական տարվա ավարտին ձևավորվեց Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետը, որը 2022թ. նոյեմբերին վերանվանվեց Հասարակական գիտությունների ֆակուլտետ: Այս դիտանկյունից նպատակահարմար է ֆակուլտետի՝ հաշվետու ուսումնական տարվա գործունեությունը ներկայացնել մասնագիտական երեք ամբիոնների գործունեության վերլուծությամբ:

«Հոգեբանության և սոցիոլոգիայի», «Մանկավարժության», «Սպորտի և արվեստի» մասնագիտական ամբիոնների գործունեությունը 2022-2023 ուսումնական տարում միտված է ուսումնական, գիտական և հասարակությանը մատուցվող այլ ծառայությունների շարունակական բարելավմանը:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը հաշվետվության մեջ ներկայացվում է նախընթաց երեք կամ չորս տարիների համեմատականներով:

❖ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ

N	ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ
1.	Հոգեբանություն(առկա, հեռակա)	բակալավր
2.	Սոցիոլոգիա (առկա, հեռակա)	բակալավր
3.	Սոցիալական աշխատանք (առկա, հեռակա)	բակալավր
4.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա(առկա, հեռակա)	բակալավր
5.	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա(հեռակա)	բակալավր
6.	Սոցիալական մանկավարժություն (հեռակա)	բակալավր
7.	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ(առկա, հեռակա)	բակալավր
8.	Դեկորատիվ կիրառական արվեստ(առկա)	բակալավր
9.	Համակարգչային գրաֆիկա(առկա)	բակալավր

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՈՎ

N	ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ
1.	Հոգեբանություն(մագիստրատուրա)	մագիստրոս
2.	Սոցիալական աշխատանք (մագիստրատուրա)	մագիստրոս
3.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա(մագիստրատուրա)	մագիստրոս
4.	Սոցիալական մանկավարժություն (մագիստրատուրա)	մագիստրոս
5.	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ (մագիստրատուրա)	մագիստրոս
6.	Դեկորատիվ կիրառական արվեստ(մագիստրատուրա)	մագիստրոս
7.	Հատուկ մանկավարժություն(մագիստրատուրա)	մագիստրոս
8.	Կրթության կազմակերպում(մագիստրատուրա)	մագիստրոս
9.	Լոգոպեդիա(մագիստրատուրա)	մագիստրոս

❖ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ

ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հետազոտությունն անցկացվել է երկու հարցաթերթով, որոնք մշակվել են «Սոցիոլոգիա» մասնագիտության առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհիների՝ Պողոսյան Նազելու և Բաղդասարյան Լիանայի կողմից: Հարցաթերթերից յուրաքանչյուրը պարունակում է տասնհինգական հարց, հարցաթերթերի լեզուն հայերենն է (Հարցման տեսակը՝ **հարցաթերթիկային հարցում**՝ խառը տիպի հարցերով): Հարցումը կատարվել է ֆակուլտետի դասախոսական կազմի և 2-րդ-4-րդ (հեռակա ուսուցման 2-րդ-5-րդ) կուրսերի ուսանողների շրջանում և՛ առցանց (google docs), և՛ առկա տարբերակներով: Հարցմանը մասնակցել են 62 դասախոս և 280 ուսանող: 2 հարցաթերթ խոտանվել է սխալների պատճառով: Վերլուծվել են 278 հարցվողի տվյալներ: Նախքան հարցումը սկսելը՝ իրականացվել է պիլոտային (փորձնական) հարցում՝ 2 անգամ հարցաթերթը ստուգելու համար: Յուրաքանչյուր հարցման տևողությունը եղել է 7-8 րոպե, ինֆորմացիայի հավաքման տևողությունը ընդգրկել է 4 շաբաթ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 1

Ըստ վերլուծության արդյուքների՝ հարցվողների մեծամասնությունը (69%) նշել է, որ դասավանդվող առարկաները շատ կարևոր են մասնագիտական ոլորտում, քանի որ ուղիղ կապ ունեն անձի և հասարակության հետ և նպաստում են ուսանողների՝ որպես իրավագիտակից քաղաքացիների ձևավորման գործընթացին: Վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվողների կեսից ավելին միջինից բարձր է գնահատել ֆակուլտետում սովորող ուսանողների մասնագիտական կոմպետենցիաները, և ընդհանուր հարցվողների մեծամասնությունը (72%) նշել է, որ ֆակուլտետում թողարկվող մասնագետները բավականաչափ մրցունակ են: Վերլուծությունը ցույց տվեց նաև, որ հարցվողների մեծամասնությունը (70%) ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությանը գնահատել է միջին գնահատական:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2

Ըստ վերլուծության արդյունքների՝ հարցված ուսանողների մեծամասնությունը (65%) ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատել է միջինից բարձր: Հարցվողների զգալի մասի (67%) սպասելիքները՝ կապված մասնագիտության և առանձին առարկաների ուսուցանման հետ, արդարացված են: Հետազոտության արդյունքների վերլուծության ընթացքում առանձնացվել են հիմնական առաջարկները, որոնք ուղղված են ուսանողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացմանը, դրանք են՝ դասավանդման գործընթացի բարելավում և պրակտիկ փորձի ապահովում, գիտելիքի փոխանցում նորառաճ և հետաքրքիր տարբերակով, ինչպես նաև ուսումնական ծրագրերի թարմացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3

Ըստ վերլուծության արդյունքների՝ հարցված ուսանողների գերակշիռ մասը (65%) ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատել է բավականաչափ բարձր: Հարցվողների մեծամասնության սպասելիքները՝ կապված մասնագիտության և առանձին առարկաների ուսուցանման հետ, լիովին արդարացվել են: Հետազոտության արդյունքների վերլուծության ընթացքում առանձնացվել են հիմնական առաջարկները, որոնք ուղղված են ուսանողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացմանը: Դրանք են՝

ա) ուսուցման հեռավար տարբերակից անցում՝ առկա ուսուցման,

բ) տարբեր սեմինարների ու վեբինարների կազմակերպում և անցկացում,

գ) պրակտիկայի համար լայն հնարավորությունների ստեղծում:

Նախքան հետազոտությունը սկսելը՝ առաջ էին քաշվել հետևյալ վարկածները.

1. Ենթադրվում է, որ Հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոսական կազմը բարձր է գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

2. Ենթադրվում է, որ Հասարակական գիտությունների ֆակուլտետի 2-րդ-4-րդ կուրսերի ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

1-ին վարկածը վերլուծությունից հետո հերքվեց: Վերլուծությունը ցուց տվեց, որ Հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոսական կազմը միջին գնահատական է տալիս մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությանը ֆակուլտետում:

2-րդ վարկածը վերլուծությունից հետո մասամբ հաստատվեց: Վերլուծությունը ցույց տվեց, որ Հասարակական գիտությունների ֆակուլտետի 2-րդ-4-րդ կուրսերի ուսանողները (առկա ուսուցման) միջինից բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում, իսկ ֆակուլտետի հեռակա ուսուցման 2-րդ-5-րդ կուրսերի ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

❖ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ: ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ: ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	218	72
2020-2021 ուս. տարի	194	55
2019-2020 ուս. տարի	194	70
2018-2019 ուս. տարի	167	52

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Առկա		Հեռակա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	92	35	90	20	36	17
2020-2021 ուս. տարի	67	19	85	17	42	19
2019-2020 ուս. տարի	51	26	83	20	60	24
2018-2019 ուս. տարի	37	10	68	20	62	22

«Հոգեբանություն» (բակալավր/մագիստրատուրա) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատության՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակն ավելացել է աստիճանական կերպով՝ 167-ից դառնալով 218: Հարկ է ընդգծել, որ դիմորդների ներգրավվածության առումով կատարվել է հետևողական աշխատանք: «Հոգեբանություն» կրթական ծրագրով սովորող ուսանողները հետաքրքրված են «Կլինիկական հոգեբանություն» և «Կառավարման հոգեբանություն» նեղ մասնագիտացումներով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	152	51
2020-2021 ուս. տարի	156	40
2019-2020 ուս. տարի	149	40
2018-2019 ուս. տարի	152	24

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Առկա		Հեռակա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	43	18	77	14	32	19
2020-2021 ուս. տարի	28	9	95	16	33	15
2019-2020 ուս. տարի	38	4	82	19	29	17
2018-2019 ուս. տարի	57	6	72	7	23	11

«Սոցիալական աշխատանք» (բակալավր/մագիստրատուրա) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատականներիի՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակը նվազել, ապա ավելացել է:

Դիմորդների ներգրավվածության առումով հարկ է մշակել պլան-ժամանակացույց և իրականացնել հետևողական աշխատանք: Ըստ սոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողները համալրվում են բազային այլ կրթություն ունեցող ուսանողներով (Հայոց լեզու և գրականություն, Պատմություն, Կառավարում, Սոցիոլոգիա, Հոգեբանություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, Անգլերեն լեզու և գրականություն և այլն), ովքեր հետաքրքրված են «Սոցիալական քաղաքականության և վարչարարության» և «Համայնքային սոցիալական աշխատանք» նեղ մասնագիտացումներով:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ (ԲԱԿԱԼԱՎՐ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	78	27
2020-2021 ուս. տարի	70	13
2019-2020 ուս. տարի	57	32
2018-2019 ուս. տարի	30	6

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԲԱԿԱԼԱՎՐ (ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ)

Ուսումնական տարի	Առկա		Հեռակա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	**55**	14	**23**	13
2020-2021 ուս. տարի	**56**	9	**14**	4
2019-2020 ուս. տարի	**43**	20	**17**	12
2018-2019 ուս. տարի	**25**	6	**5**	0

«Սոցիոլոգիա» (բակալավր) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատականների՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակը նվազում է գրանցել. 2022-2023 ուսումնական տարում ընդունվել է 1 դիմորդ: Դա պայմանավորված է եղել միասնական երկրորդ «մաթեմատիկա» առարկայի ընդունելության քննության ավելացմամբ: Հարկ է այս առումով իրականացնել հետևողական աշխատանք, քանզի մասնագիտությունը կայացել է՝ գրանցելով հաջողություններ նաև աշխատաշուկայում, ինչին նպաստել են նաև հրավիրյալ մասնագետները: Ըստ հետազոտության արդյունքների՝ «Սոցիոլոգիա» մասնագիտության բակալավրի ուսանողները հետաքրքրված են «Կիրառական սոցիոլոգիա» և «Կառավարման սոցիոլոգիա» մասնագիտացումներով, ինչը նպատակահարմար է իրականացնել մագիստրոսի կրթական ծրագրի արտոնագրի կամ թույլատրագրի (լիցենզիա) ձեռքբերմամբ: Հաշվետու ուսումնական տարում հատկապես մասնագիտության ուսումնառողները՝ դասախոսների վերահսկմամբ իրականացնում են սոցիոլոգիական հարցումներ ֆակուլտետի կրթական ծրագրերի և ընդհանուր ուսումնական գործընթացի վերաբերյալ: Այդ դիտանկյունից ցանկալի է հետազոտության որոշակի անկյունադարձեր ընտրելով՝ սոցիոլոգիական վերլուծություններ կատարել բուհի բոլոր կրթական ծրագրերի առումով՝ օգտագործելով սոցիոլոգների ներուժը:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	199	57
2020-2021 ուս. տարի	223	56
2019-2020 ուս. տարի	230	54
2018-2019 ուս. տարի	248	45

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

(ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Առկա		Հեռակա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	72	21	92	18	35	18
2020-2021 ուս. տարի	78	13	110	24	35	18
2019-2020 ուս. տարի	93	16	104	22	33	16
2018-2019 ուս. տարի	119	16	98	12	31	17

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» (բակալավր/մագիստրատուրա) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատության՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակը նվազել է՝ 248 -ից դառնալով 199-ը: Հարկ է ընդգծել, որ այս մասնագիտության ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության առումով իրականացվելու է հետևողական աշխատանք, քանզի 2022-2023 ուսումնական տարում ընդունվել են 5 ուսանող: Վերջինիս պատճառը միասնական երկրորդ «Մաթեմատիկա» առարկայի ընդունելության քննության ավելացումն էր:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ԲԱԿԱԼԱՎՐ ՀԵՌԱԿԱ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	36	12
2020-2021 ուս. տարի	39	12
2019-2020 ուս. տարի	50	11
2018-2019 ուս. տարի	52	16

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐ (ՀԵՌԱԿԱ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Հեռակա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	**21**	7	**15**	5
2020-2021 ուս. տարի	**22**	2	**17**	10
2019-2020 ուս. տարի	**29**	3	**21**	8
2018-2019 ուս. տարի	**29**	6	**23**	10

«Սոցիալական մանկավարժություն» (բակալավր հեռակա և մագիստրատուրա) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատականների՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակը նվազել է հատկապես հաշվետու ուսումնական տարում: Հարկավոր է այս առումով դիմորդների ներգրավվածություն ապահովել, քանզի 2022-2023 ուսումնական տարում մասնագիտության հեռակա ուսուցմամբ դիմորդ չի ընդունվել, **ինչը վերահաս վտանգ է կրթական ծրագրի շարունակականությունը ապահովելու դիտանկյունից:**

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐ (ՀԵՌԱԿԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	32	7
2020-2021 ուս. տարի	34	2
2019-2020 ուս. տարի	28	9
2018-2019 ուս. տարի	28	8

«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատականների՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների թվաքանակի ակնհայտ ավելացում չի գրանցվել: Հարկավոր է այս առումով դիմորդների ներգրավվածություն ապահովել, քանի որ 2022-2023 ուսումնական տարում մասնագիտության հեռակա ուսուցմամբ դիմորդ չի ընդունվել, **ինչը վերահաս վտանգ է կրթական ծրագրի շարունակականությունը ապահովելու դիտանկյունից:**

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	25	13
2020-2021 ուս. տարի	16	16
2019-2020 ուս. տարի	-	-
2018-2019 ուս. տարի	-	-

«Հատուկ մանկավարժություն» մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ երկու տարիների համեմատականի (կրթական ծրագիրը թողարկվել է 2020-2021 ուսումնական տարվանից) գրանցում է դինամիկ աճ: Ուսումնառողների և դիմորդների շրջանակներում կա մասնագիտության նկատմամբ ինքնահատուկ հետաքրքրվածություն՝ պայմանավորված աշխատաշուկայի հնարավորություններով: Մասնագիտության կայացմանը նպաստել է նաև հրավիրյալ մասնագետների դասավանդումը:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ԼՈԳՈՊԵԴԻԱ
(ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	25	11
2020-2021 ուս. տարի	16	16
2019-2020 ուս. տարի	-	-
2018-2019 ուս. տարի	-	-

«Լոգոպեդիա» մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ երկու տարիների համեմատականի (կրթական ծրագիրը թողարկվել է 2020-2021 ուսումնական տարվանից) գրանցում է դինամիկ աճ: Ուսումնառողների և դիմորդների շրջանակներում կա մասնագիտության նկատմամբ հետաքրքրվածություն՝ պայմանավորված աշխատաշուկայի հնարավորություններով: Մասնագիտության կայացմանը նպաստել են նաև հրավիրյալ մասնագետները:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
(ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	**32**	14
2020-2021 ուս. տարի	**32**	20
2019-2020 ուս. տարի	**26**	13
2018-2019 ուս. տարի	**23**	10

«Կրթության կազմակերպում» մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատականների՝ գրանցում է աճ: Ուսումնառողների թվաքանակը 23-ից հասել է 32-ի: Վերջին երկու տարիներին թվական նույն տվյալներն են գրանցվել: Հարկ է աշխատանքներ իրականացնել՝ թվաքանակի աճ գրանցելու համար:

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ (ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	**183**	51
2020-2021 ուս. տարի	**187**	60
2019-2020 ուս. տարի	**165**	53
2018-2019 ուս. տարի	**155**	27

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ուսումնական տարի	Առկա		Հեռակա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	**73**	29	**99**	15	**11**	7
2020-2021 ուս. տարի	**75**	30	**106**	26	**6**	4
2019-2020 ուս. տարի	**68**	27	**90**	23	**7**	3
2018-2019 ուս. տարի	**61**	8	**85**	14	**9**	5

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (բակալավր/մագիստրատուրա) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատության՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակն ավելացել է՝ 160-ից

դառնալով 183: Հարկ է ընդգծել, որ այս մասնագիտության ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության առումով իրականացվում է հետևողական աշխատանք, քանզի 2022-2023 ուսումնական տարում ընդունվել են 55 ուսանող առկա և հեռակա ուսուցման համակարգերում, իսկ մագիստրատուրայում՝ 5 ուսանող:

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

(ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	28	
2020-2021 ուս. տարի	28	
2019-2020 ուս. տարի	39	
2018-2019 ուս. տարի	50	
Ընդամենը	145	

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

(ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Առկա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	**21**	9	**7**	4
2020-2021 ուս. տարի	**20**	3	**8**	3
2019-2020 ուս. տարի	**21**	5	**10**	5
2018-2019 ուս. տարի	**30**	4	**9**	4

«Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակի համեմատականներով նշենք, որ հարկ է մշակել գործողությունների պլան-ժամանակացույց՝ դիմորդներին մասնագիտության ուղղությամբ շահադրդելու համար:

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐ

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2021-2022 ուս. տարի	15	1
2020-2021 ուս. տարի	20	10
2019-2020 ուս. տարի	10	4
2018-2019 ուս. տարի	7	2

«Համակարգչային գրաֆիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ չորս տարիների համեմատության՝ նվազել է, որը հանգեցրել է կրթական ծրագրի ընդհատման:

❖ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

ԱՄԲԻՈՆ/ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՇՐՋԱՆԱՎԱՐՏ 2021-2022	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2022-2023
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ	108	69
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ	121	72
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ (ՖԻԶ. ԴԱՍՏ. ԵՎ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ)	35	55
ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ ՆԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ	9	9
ԸՆԴԱՄԵՆԸ	273	205

Մասնագիտական երկու ամբիոններում՝ Հոգեբանության և սոցիոլոգիայի, Մանկավարժության, շրջանավարտների թվական տվյալների համեմատությամբ ընդունելության ցուցանիշները քիչ են գրանցվել: Պատճառը, թերևս, ընդունելության քննություններն են եղել. մեկ քննության փոխարեն բակալավրի կրթական ծրագրի համար դիմորդները պարտադիր հանձնելու էին երկու միասնական քննություն: Սպորտի և արվեստի ամբիոնի ընդունելության ցուցանիշների աճ է գրանցվել:

2021-2022 հաշվետու ուսումնական տարում մասնագիտական երեք ամբիոնների թողարկած կրթական ծրագրերով սովորել է 1023 ուսանող: 2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետում սովորում են 969 ուսանող: Կրթական ծրագրերն իրականացվում են ֆակուլտետի մասնագիտական երեք ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի 79 դասախոսների կողմից:



Դիմորդների ներգրավվածության առումով մասնագիտական երեք ամբիոններն էլ իրականացրել են տարաբնույթ աշխատանքներ, որոնք երբեմն կրել են չհամակարգված բնույթ: Այդ փաստը նկատի ունենալով՝ ֆակուլտետում մշակվել է դիմորդների ներգրավվածությունն ապահովող և կանոնարկող փաստաթուղթ, որում արտացոլված են այն բոլոր գործողությունները, որոնք ապահովելու են դիմորդների մուտքը բուհ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2019-2020, 2020-2021 ԵՎ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Հոգեբանություն	1-ին կուրս	50%	50%	31,42%
	2-րդ կուրս	25%	50%	70%
	3-րդ կուրս	66,66%	33%	85,71%
	4-րդ կուրս	53,33 %	71%	87,5%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1-ին կուրս	5,55 %	11,11 %	0%
	2-րդ կուրս	57, 14 %	16,66 %	27,7%
	3-րդ կուրս	41,6 %	57,14 %	61,11%
	4-րդ կուրս	59,25 %	41,66 %	50%
Սոցիալական աշխատանք	1-ին կուրս	25%	80%	27,7%
	2-րդ կուրս	50%	83%	81,8%
	3-րդ կուրս	100%	75%	55,5%
	4-րդ կուրս	63,63%	100%	62,5%
Սոցիոլոգիա	1-ին կուրս	45%	50%	6,25%
	2-րդ կուրս	100%	46%	50%
	3-րդ կուրս	52,94%	100%	69,56%

	4-րդ կուրս	-	75%	100%
Ֆիզիկական դասիարակություն և սպորտային մարզումներ	1-ին կուրս	0%	0%	2,7%
	2-րդ կուրս	9,10%	31,25%	10%
	3-րդ կուրս	26,31%	18,8%	25%
	4-րդ կուրս	18,18%	21%	18,18%
Դեկորատիվ կիրառական արվեստ	1-ին կուրս	25%	66,6%	33,3%
	2-րդ կուրս	25%	60%	33,3%
	3-րդ կուրս	75%	50%	60%%
	4-րդ կուրս	0%	100%	100%
Համակարգչային գրաֆիկա	1-ին կուրս	75%	40%	0%
	2-րդ կուրս	0%	100%	66,6%
	3-րդ կուրս	100%	100%	75%
	4-րդ կուրս	-	100%	100%

Հաշվետու տարում, ըստ երեք ուսումնական տարիների համեմատականների, բոլոր մասնագիտական ծրագրերի 1-4-րդ կուրսերի ուսանողների առաջադիմության համեմատականներում գրանցվում է դինամիկ աճ: Հարկ է ուշադրություն բևեռել 100% առաջադիմություն գրանցած կուրսերի տվյալներին, ուսանողների գնահատմանը: Առաջարկվում է տվյալ կուրսերում անցկացնել մնացորդային գիտելիքի ստուգում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2019-2020, 2020-2021 ԵՎ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Սոցիալական աշխատանք	1-ին կուրս	94,44%	61%	84,2%
	2-րդ կուրս	100%	94%	71,4%
Հոգեբանություն	1-ին կուրս	50%	63%	50%
	2-րդ կուրս	52%	77%	50%
Սոցիալական մանկավարժություն	1-ին կուրս	85,71%	50%	100%
	2-րդ կուրս	70 %	100%	80%
Հատուկ մանկավարժություն	1-ին կուրս	-	93,75%	92,85%
	2-րդ կուրս	-	-	93,75%
Լոգոպեդիա	1-ին կուրս	-	100%	90,90%
	2-րդ կուրս	-	-	100%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1-ին կուրս	41,17%	66,66%	66,66%
	2-րդ կուրս	82,35%	76,47%	66,66%
Կրթության կազմակերպում	1-ին կուրս	90,90%	94,44 %	94,44%
	2-րդ կուրս	94,44 %%	100%	100%

Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	**1-ին կուրս**	**20%**	**75%**	**100%**
	2-րդ կուրս	**0%**	**40%**	**50%**
Դեկորատիվ կիրառական արվեստ	**1-ին կուրս**	**20%**	**100%**	**100%**
	2-րդ կուրս	**75%**	**33,3%**	**66,6%**

Հաշվետու ուսումնական տարում Հասարակական գիտությունների ֆակուլտետի՝ մագիստրոսի կրթական ծրագրով մասնագիտությունների շատ կուրսերում գրանցվել է առաջադիմության աճ: Հարկ է ուշադրություն բևեռել 100% առաջադիմություն գրանցած կուրսերի ցուցանիշներին, ուսանողների գնահատմանը: **Առաջարկվում է տվյալ կուրսերում անցկացնել մնացորդային գիտելիքի ստուգում:**

2019-2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Մասնագիտություն	Առկա/Հեռակա/ Մագիստրատուրա	Ուսանողնե-րի քանակ	Դիպլոմի տեսակը	
				Գերազ.	Սովոր.
1.	Սոցիալական աշխատանք	Ա	11	1	10
2.	Հոգեբանություն	Ա	21	6	15
3.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Ա	16	10	6
4.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Ա	4	0	4
5.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Ա	4	2	2
6.	Համակարգչային գրաֆիկա	Ա	-	-	-
7.	Սոցիալական աշխ.	Հ	20	0	20
8.	Հոգեբանություն	Հ	9	0	9
9.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Հ	16	0	16
10.	Սոցիալական մանկավարժություն	Հ	9	1	8
11.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Հ	19	0	19
12.	Հոգեբանություն	Մ	21	6	15
13.	Սոցիալական աշխ.	Մ	11	1	10
14.	Զինվորական հոգեբանություն	Մ	6	0	6
15.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Մ	16	10	6

16.	Կրթության կազմակերպում	Մ	10	6	4
17.	Սոցիալական մանկավարժություն	Մ	10	4	6
18.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Մ	4	0	4
19.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Մ	4	2	2
ԸՆԴԱՄԵՆԸ՝			211	49	162

2019-2020 ուսումնական տարում 211 ուսանող մասնակցել է ամփոփիչ ատեստավորման քննություններին: 211 ուսանողից գերազանցության դիպլոմ է ստացել 49-ը, որից 31-ը Մանկավարժության ամբիոնի շրջանավարտներն են, 14-ը՝ Հոգեբանության և սոցիոլոգիայի շրջանավարտները, 2-ը՝ «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումներ» մասնագիտությունից, 2-ը՝ «Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությունից:

2020-2021 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Մասնագիտություն	Առկա/Հեռակա/ Մագիստրատուրա	Ուսանողների քանակ	Դիպլոմի տեսակը	
				Գերազ.	Սովոր.
1.	Սոցիալական աշխատանք	Ա	5	3	2
2.	Հոգեբանություն	Ա	7	6	1
3.	Սոցիոլոգիա	Ա	16	6	10
4.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Ա	32	5	27
5.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Ա	19	0	19
6.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Ա	8	5	3
7.	Համակարգչային գրաֆիկա	Ա	5	1	4
8.	Սոցիալական աշխ.	Հ	22	1	21
9.	Հոգեբանություն	Հ	13	-	13
10.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Հ	27	0	27
11.	Նախադպրոցական մանկ. և մեթոդիկա	Հ	7	0	7
12.	Սոցիալական մանկավարժություն	Հ	8	2	6
13.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Հ	13	0	13
14.	Հոգեբանություն	Մ	23	11	12

15.	Սոցիալական աշխ.	Մ	18	15	3
16.	Զինվորական հոգեբանություն	Մ	1	-	1
17.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Մ	17	6	11
18.	Կրթության կազմակերպում	Մ	12	12	0
19.	Սոցիալական մանկավարժություն	Մ	7	5	2
20.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Մ	2	1	1
21.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Մ	5	2	3
ԸՆԴԱՄԵՆԸ՝			267	81	186

2020-2021 ուսումնական տարում 267 ուսանող մասնակցել է ամփոփիչ ատեստավորման քննություններին: 267 ուսանողից գերազանցության դիպլոմ է ստացել 81-ը, որից 30-ը Մանկավարժության ամբիոնի շրջանավարտներն են, 41-ը՝ Հոգեբանության և սոցիոլոգիայի շրջանավարտները, 1-ը՝ «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումներ» մասնագիտությունից, 7-ը՝ «Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությունից, 1-ը՝ «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունից:

2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Մասնագիտություն	Առկա/Հեռակա/ Մագիստրատուրա	Ուսանողների քանակ	Դիպլոմի տեսակը	
				Գերազ.	Սովոր.
1.	Սոցիալական աշխատանք	Ա	7	3	4
2.	Հոգեբանություն	Ա	10	6	4
3.	Սոցիոլոգիա	Ա	6	6	0
4.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Ա	15	3	12
5.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Ա	9	1	8
6.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Ա	4	0	4
7.	Համակարգչային գրաֆիկա	Ա	1	0	1
8.	Սոցիալական աշխ.	Հ	9	2	7
9.	Հոգեբանություն	Հ	19	1	18
10.	Սոցիոլոգիա	Հ	3	0	3
11.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Հ	24	0	24
12.	Նախադպրոցական մանկ. և մեթոդիկա	Հ	4	0	4
13.	Սոցիալական մանկավարժություն	Հ	3	0	3
14.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Հ	21	0	21

15.	Հոգեբանություն	Մ	18	12	6
16.	Սոցիալական աշխատանք	Մ	13	8	5
17.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Մ	17	9	8
18.	Կրթության կազմակերպում	Մ	18	13	5
19.	Սոցիալական մանկավարժություն	Մ	10	4	6
20.	Հատուկ մանկավարժություն	Մ	16	15	1
21.	Լոգոպեդիա	Մ	14	14	0
22.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Մ	4	2	2
23.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Մ	3	1	2
ԸՆԴԱՄԵՆԸ՝			248	100	148

2021-2022 ուսումնական տարում 245 ուսանող մասնակցել է ամփոփիչ ատեստավորման քննություններին: 245 ուսանողից գերազանցության դիպլոմ է ստացել 99-ը, որից 58-ը Մանկավարժության ամբիոնի շրջանավարտներն են, 38-ը՝ Հոգեբանության և սոցիոլոգիայի շրջանավարտները, 3-ը՝ «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումներ» մասնագիտությունից, 1-ը՝ «Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությունից:

Հաշվետու ուսումնական տարում գերազանցության դիպլոմ են ստացել 100 ուսանող, ինչը 3 ուսումնական տարիների համեմատությամբ (2019-2020թթ.՝ 49-ը, 2020-2021թթ.՝81-ը) գերակշիռ է:


Վերջին 3 տարում բուհը գերազանցությամբ ավարտած ուսանողների համեմատական վերլուծություն
մագիստրատուրա
առկա
հեռակա
2019-2020
2020-2021
2021-2022
29
19
1
52
26
3
78
19
3


Վերջին 3 տարում բուհը ոչ գերազանց ավարտած ուսանողների համեմատական վերլուծություն
մագիստրատուրա
առկա
հեռակա
2019-2020
2020-2021
2021-2022
53
37
72
33
66
87
35
33
80

❖ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

❖ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՇԻՌԸ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԻ ՄԵՋ

❖ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՇԻՌԸ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԻ ՄԵՋ

Ֆակուլտետում ուսումնական գործունեություն իրականացնում են **79 աշխատակից**՝ հիմնական, համատեղող և ժամավճարային կարգով ներառյալ, որից՝

- ✓ գիտական աստիճան (գիտ. թեկն.) ունի 34-ը (43 %),
- ✓ գիտական կոչում (դոցենտ)՝20-ը (25,3 %),
- ✓ պրոֆեսոր՝ 7 (8,9%), դոկտոր՝ 5 (6,3 %),
- ✓ դասախոս՝37 (46,8 %):

Ֆակուլտետի 79 աշխատակցից՝

- ✓ 51-ը հիմնական են (64,6 %),
- ✓ 20-ը՝ համատեղությունը (25,3%),
- ✓ 8-ը՝ժամավճարային հիմունքներով (10,1%):


դոկտոր
պրոֆեսոր
դոցենտ
գիտ. թեկն.
դասախոս
5
7
20
34
37
Դասախոսական կազմ


10,1%
25,3%
64,6%
հիմնական
համատեղող
ժամավճար


21,5%
27,9%
50,6%
մինչև 40 տ.
40-60 տ.
60 տ.-ից բարձր

Ֆակուլտետի 79 աշխատակցից՝

- ✓ 22-ը տարիքային բաշխվածությամբ՝ մինչև 40 տարեկան են (27, 9%),
- ✓ 40 դասախոս՝ 40-60 տարեկանի միջակայքում (50,6%),
- ✓ 17 դասախոս՝ 60-ից բարձր տարիքային խումբ (21,5%):

Եզրակացնում ենք, որ ֆակուլտետը ծերացող չէ, սակայն հարկ է մասնագիտական ամբիոններում իրականացնել սահուն սերնդափոխության ռազմավարություն՝ համադիր ՇՊՀ-ի Ռազմավարական ծրագրին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ







Ըստ մասնագիտական երեք ամբիոնների գենդերային բաշխվածության վերլուծության՝ իգական սեռը գերակշռող է հանդիսանում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 26 դասախոսից՝

- գիտական աստիճան (գիտ. թեկն) ունի **7-ը** (26,9 %),
- գիտական կոչում (դոցենտ) ՝**5-ը** (19,2 %),
- պրոֆեսոր՝**1-ը**,
- դոկտոր՝**1-ը** (3,8 %),
- դասախոս՝ **18-ը (69,2 %):**



Ըստ տարիքային խմբերի՝

- **մինչև 40՝** 14 (53,9 %)
- **40-60՝ 9** (34,6%)
- **60-ից բարձր՝ 3 (11,5%)**



Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնը ֆակուլտետի երիտասարդ մասնագիտական ամբիոնն է:

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի աշխատակիցներից՝

- հիմնական՝ 20-ը (76,95%),
- համատեղող՝ 6-ը (23, 15%/),
- ժամավճարային՝ 0:



Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնում գերակշիռ են հիմնական աշխատողները:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Մանկավարժության ամբիոնի 30 դասախոսից՝

- գիտական աստիճան/գիտ. թեկն. ունի 18-ը (60 %),
- գիտական կոչում/դոցենտ ՝10-ը (33,3 %),
- պրոֆեսոր՝ 3-ը (10%),
- դոկտոր՝ 4-ը (13,3 %),
- դասախոս՝ 8-ը (26,7 %):



Ըստ տարիքային խմբերի՝

- մինչև 40՝ 4-ը (13,3%)
- 40-60՝ 21-ը (70%)
- 60-ից բարձր՝ 5-ը (16,7%)



Մանկավարժության ամբիոնի ամբիոնի աշխատակիցներից՝

- հիմնական՝15-ը (50%),
- համատեղող՝10-ը (33,3%),
- ժամավճարային՝6-ը (16,7%):



•

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

Սպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից՝

- գիտական աստիճան (գիտ. թեկն.) ունի 9-ը (39,1 %),
- դոցենտ ՝5 (21,7 %),
- պրոֆեսոր՝3 (13%),
- դոկտոր՝0,
- դասախոս՝ 11 (47,8 %):



Ըստ տարիքային խմբերի՝

- մինչև 40՝ 4 (17,4%)
- 40-60՝ 10(43,5%)
- 60-ից բարձր՝ 9 (39,1%)



Սպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից՝

- հիմնական՝16-ը (69,6%),
- համատեղող՝4-ը (17,4%),
- ժամավճարային՝3-ը (13%)



❖ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 26 դասախոսից 5 դասախոս ունեցել են ընդամենը **11 գիտական հոդված (19,23 %):**

Մանկավարժության ամբիոնի 30 դասախոսից 6 դասախոս ունեցել է ընդամենը **8 գիտական հոդված (20 %):**

Սպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից 3 դասախոս ունեցել է ընդամենը **8 գիտական հոդված (13, 04 %):**



Ֆակուլտետի **79** աշխատակցից ընդամենը **14-ն են ունեցել 27 գիտական հոդված (17,72 %):**

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 26 դասախոսից մասնագիտական վերապատրաստման են մասնակցել **10 դասախոս (38,46 %),** իսկ ոչ մասնագիտական՝ **4 (15,38 %)**: **Մանկավարժության ամբիոնի 30 դասախոսից՝** ոչ մասնագիտական վերապատրաստման են մասնակցել **4 դասախոս (13,3 %): Սպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից՝** ոչ մասնագիտական վերապատրաստման են մասնակցել **2 դասախոս՝ (8,69 %): Ընդհանուր առմամբ, ֆակուլտետի 79 աշխատակցից՝** մասնագիտական վերապատրաստման մասնակցել են **10 դասախոս (12,65 %),** իսկ ոչ մասնագիտական վերապատրաստման՝**6 դասախոս (12,65 %):**



	Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն	Մանկավարժության ամբիոն	Սպորտի և արվեստի ամբիոն
ոչ մասնագիտական	4	4	2
Մասնագիտական	10	0	0

❖ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՈՒԹՀՄ /SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ֆակուլտետի ՈՒԹՀՄ /SWOT վերլուծություն

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1.Կառավարման մարմինների որոշումների կայացմանը վերաբերող հարցերը և իրավասությունների շրջանակը սահմանված է բուհի կանոնադրությամբ: 2. Ֆակուլտետն ունի գործող, կենսունակ խորհուրդ, որի գերծունեության շրջանակներում մշտապես գնահատվում է ֆակուլտետի գործունեության արդյունավետությունը, քննարկվում են տարաբնույթ հարցեր և կայացվում են որոշումներ: 3. Ֆակուլտետի առաքելությունը համահունչ է բուհի առաքելությանը և առաջնահերթություններին: 4.Կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավումն ապահովող կանոնակարգային և ընթացակարգային հենքի առկայություն: 5.Կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հասանելիություն ֆակուլտետի շահառուների	1.Լրացուցիչ ֆինանսական հոսքերի ներգրավման ուղղությամբ կառուցվածքային ստորաբաժանումների նախաձեռնության պակաս: 2.Կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ոչ միշտ համահունչ լինելը ակնկալվող կրթական վերջնարդյունքներին: 3.Ուսանողների՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակ: 4.Ուսումնական խորհրդատուների/մենթորների ցածր արդյունավետությամբ աշխատանք: 5.Հետազոտական աշխատանքներում երիտասարդ դասախոսների և ուսանողների ներգրավվածության ցածր մակարդակ: 6. Անձնակազմի՝ օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ: 7. Ուսանողների և դասախոսների միջազգային ակադեմիական շարժունության ոչ բավարար մակարդակ: 8.Քիչ է ֆակուլտետի դասախոսների միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը:

համար։ 6.Հեռավար ուսուցման հնարավորություններ։ 7.Ուսումնական գործընթացը կանոնակարգող փաստաթղթերի և ընթացակարգերի առկայություն։ 8. Շրջանավարտների հետ հետադարձ կապի պահպանում և ընդլայնում։ 9.Արհեստավարժ, բազմամյա փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ։ 10.Դասախոսական կազմի ճկուն և աղյունավետ սերնդափոխություն։ 11.Արգասաբեր աշխատանքի գնահատման և խրախուսման մեխանիզմի առկայություն։ 12. Ուսանողակենտրոն գործունեություն։ 13. Ոլորտային նորարարությունների տեղայնացման միտվածություն։ 14. Ֆակուլտետի պրոֆեսորադասխոսական անձնակազմը համալրված է ոլորտի առաջատար գործնական ուղղվածությամբ մասնագետներով՝ այդ թվում նաև հանրապետության առաջատար բուհերից հրավիրված մասնագետներով։	
Հնարավորությունները	**Մարտահրավերները**
1. Ուսանողների վարձերի վճարման այլընտրանքային աղբյուրների առկայություն։ 2. Հեռավար ուսուցման հնարավորությունների	1. «Սոցիոլոգիա» մասնագիտության ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիր։

ընդլայնում։ 3. Գործատուների և մյուս շահակիցների հետ համագործակցության ընդլայնում կրթական ծրագրերի մշակման և իրականացման, արտաքին փորձաքննության, ինչպես նաև պրակտիկաների իրականացման գործընթացներում։ 4. Միջբուհական համագործակցության զարգացում ազգային և միջազգային մակարդակներում՝ միջմասնագիտական համատեղ ծրագրերի իրականացման նպատակով։ 5. Միջազգային դրամաշնորհային ծրագրերի հնարավորությունների օգտագործում՝ կրթական գործընթացների արդիականացման նպատակով։ 6. Գործընկեր բուհերի և կազմակերպությունների հետ կրթական և գիտական համագործակցություն։ 7. Գիտության կոմիտեի կողմից պարբերաբար հայտարարվող մրցույթներ և դրամաշնորհներ։ 8. Ֆակուլտետի վերազինում և էսթետիկ հարդարում։ 10. Դիմորդների ներգրավման նպատակով մասնագիտական կողմնորոշման դպրոցի հիմնում։	2. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական մանկավարժություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիրը։ 3. «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունների ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիրը։

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ

SWOT վերլուծության

SWOT վերլուծության արդյունքները՝

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ամբիոնը կայուն կապեր է հաստատել տարածաշրջանների գործատուների և հասարակական ոլորտի ներկայացուցիչների հետ: • Ամբիոնը միավորում է հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք մասնագիտությունները՝ ապահովելով դրանց փոխազդեցության արդյունավետ միջգիտակարգային զարգացումը: • Ամբիոնի մասնագիտացումների գծով վերջին տարիներին նկատվում է դիմորդների քանակական աճ հանրապետությունում բուհ ընդունվողների ընդհանուր քանակի նվազման ֆոնին: • Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրված է ոլորտի առաջատար գործնական ուղղվածությամբ մասնագետներով՝ այդ թվում նաև հանրապետության առաջատար բուհերից հրավիրված մասնագետներով: • Ամբիոնը ստեղծել է մասնագիտական գրականության ֆոնդ, որը համալրել և համալրում է իր մասնագիտություններին համապատասխան ժամանակակից գիտագործնական գրականությամբ: • Ամբիոնը զգալի առաջընթաց է գրանցել իր փաստաթղթագործավարական աշխատանքների	• Ամբիոնում սակավ է գիտական աստիճան ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների քանակը: • Ամբիոնի որոշ մասնագիտությունների գծով սակավաթիվ է հիմնական դասախոսական կազմը: • Ամբիոնի որոշ մասնագիտացումների մասով դեռևս պարզորոշ և տարբերակված ու ընդգծված չէ գործատուների հստակ բազան, իսկ որոշ դեպքերում հնարավոր դիմորդների հավանական թիրախային խումբը: • Ամբիոնի դասախոսներից սակավաթիվ մասնագետներն են ներգրավված միջազգային ծրագրերում: • Ցածր է ամբիոնի դասախոսների՝ միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը: • Ամբիոնի կողմից սպասարկվող մասնագիտական կրթական ծրագրերում գերակայում են տեսական ուղղվածությամբ առարկաները: • Թույլ է կամ նկատելի չէ դեռևս դասավանդվող դասընթացների կապը ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների հետ: • Թույլ է ամբիոնի աշխատակիցների օտար լեզուների իմացության մակարդակը:

համակարգման ոլորտում՝ հստակ ապահովելով բոլոր սահմանված փաստաթղթերի առկայությունն ու հասանելիությունը: • Ամբիոնի կողմից դասավանդվող դասընթացներն արտացոլում են ոլորտի արդի գիտական ձեռքբերումներն ու արդյունքները:	
Հնարավորություններ	**Մարտահրավերներ**
• Ամբիոնի ուժեղ կապը գործատուների հետ հնարավորություն է տալիս էապես զարգացնել միջազգային ծրագրերում և հետազոտական նախագծերում ամբիոնի աշխատակիցների ներգրավվածությունը: • Հեռավար կրթության ոլորտում նոր ծրագրերի իրականացումը համալսարանում կարող է նոր հնարավորություններ ստեղծել ամբիոնի գործունեության զարգացման համար՝ նկատի ունենալով բազմաթիվ պոտենցիալ դիմորդների առկայությունը արտերկրում: • Հասարակական սեկտորի և այլ շահակիցների հետ կապը հնարավորություն է տալիս նաև ապահովելու ամբիոնի ջանքերով գիտահետազոտական գործունեության արդյունքների ապրանքայնացման կանոնակարգված գործընթաց:	• «Սոցիոլոգիա» մասնագիտության ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիր:

Ամբիոնը մշակել է թույլ կողմերի վերացման մեխանիզմները, իսկ հնարավորությունները դարձրել ամբիոնի ուժեղ կողմ. աջակցել երիտասարդ դասախոսներին գիտական գործունություն իրականացնելուն, նպաստել, որպեսզի տպագրված գիտական հոդվածների քանակն աճի տարեկան կտրվածքով: Ամբիոնի խնդիրներից է նաև մեխաիզմներ մշակել մասնագիտական գրքերի քանակի ավելացման և

նյութատեխնիկական բազայի բարելավման համար: Ինչպես նաև ամբիոնի համար զարգացման կարևոր նախապայմաններից է ընդլայնել հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը:

Թվարկված թույլ կողմերը վերացնելը ամբիոնի առաջնահերթություններից է, ամբիոնը հետամուտ է նաև հետևյալ նպատակների իրականացմանը.

- Արդիականացնել բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, ներառյալ դասավանդման և գնահատման մեթոդաբանությունը, դասընթացների բովանդակությունը, արդիական ուսումնական նյութերի և մոտեցումների կիրառումը: Պարբերաբար իրականացնել կրթական ծրագրերի որակի գնահատում, դասավանդման որակը համապատասխանեցնել գիտության զարգացման համաշխարհային միտումներին:
- Ընդլայնել ամբիոնի միջազգային համագործակցության շրջանակը:
- Զարգացնել հետազոտական պրակտիկաների ծավալային և թեմատիկ կողմերը:
- Ապահովել ամբիոնի ՊԴ կազմի մասնագիտական աճի շարունակականությունը:

Ամբիոնին կից գործում է նաև հոգեբանական ծառայությունների և խորհրդատվության կենտրոնը, որի նպատակն է բուհի ներքին շահառուների կարիքների բավարարման նպատակով տրամադրել սոցիալ-հոգեբանական ծառայություններ, իրականացնել սոցիալ-հոգեբանական գիտելիքների վերազինման վերապատրաստումներ և սեմինարներ (կենտրոնի նպատակն ու խնդիրները սահմանված են ՇՊՀ սոցիալ-հոգեբանական ծառայությունների կենտրոնի կանոնադրությամբ՝ 2021թ. հոկտեմբերի 26-ի Գիտական խորհրդի կողմից հաստատված):

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

SWOT վերլուծության

SWOT վերլուծության արդյունքները՝

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ամբիոնը կայուն կապեր է հաստատել տարածաշրջանների գործատուների հետ: • Ամբիոնի մասնագիտացումների գծով վերջին տարիներին նկատվում է դիմորդների քանակական աճ: • Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրված է ոլորտի առաջատար մասնագետներով, այդ թվում նաև հանրապետության առաջատար բուհերից հրավիրված մասնագետներով: • Ամբիոնի կողմից դասավանդվող դասընթացներն արտացոլում են ոլորտի արդի գիտական ձեռքբերումներն ու արդյունքները: • Ամբիոնի մասնագիտացումների մասով դեռևս պարզորոշ և տարբերակված ու ընդգծված է գործատուների հստակ բազան:	• Ամբիոնի որոշ մասնագիտությունների գծով սակավաթիվ է հիմնական դասախոսական կազմը: • Ցածր է ամբիոնի դասախոսների՝ միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը: • Թույլ է ամբիոնի աշխատակիցների օտար լեզուների իմացության մակարդակը:
Հնարավորություններ	**Մարտահրավերներ**

• Ամբիոնի ուժեղ կապը գործատուների հետ հնարավորություն է տալիս էապես զարգացնել հետազոտական նախագծերում ամբիոնի աշխատակիցների ներգրավվածությունը։ • Հեռավար կրթության ոլորտում նոր ծրագրերի իրականացումը համալսարանում կարող է նոր հնարավորություններ ստեղծել ամբիոնի գործունեության զարգացման համար՝ նկատի ունենալով բազմաթիվ պոտենցիալ դիմորդների առկայությունը արտերկրում։ • Շահակիցների հետ կապը հնարավորություն է տալիս նաև ապահովելու ամբիոնի ջանքերով գիտահետազոտական գործունեության արդյունքների կանոնակարգված գործընթաց։	• «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական մանկավարժություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիր։

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆԻ

SWOT վերլուծության

SWOT վերլուծության արդյունքները՝

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ամբիոնը կայուն կապեր է հաստատել տարածաշրջանների գործատուների հետ: • Ամբիոնի մասնագիտացումների գծով վերջին տարիներին նկատվում է դիմորդների քանակական աճ: • Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրված է ոլորտի առաջատար գործնական ուղղվածությամբ մասնագետներով: • Ամբիոնի կողմից դասավանդվող դասընթացներն արտացոլում են ոլորտի արդի գիտական ձեռքբերումներն ու արդյունքները:	• Ցածր է ամբիոնի դասախոսների միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը: • Թույլ է ամբիոնի աշխատակիցների օտար լեզուների իմացության մակարդակը:
Հնարավորություններ	**Մարտահրավերներ**
• Ամբիոնի ուժեղ կապը գործատուների հետ հնարավորություն է տալիս էապես զարգացնել միջազգային ծրագրերում և հետազոտական նախագծերում ամբիոնի աշխատակիցների ներգրավվածությունը:	• «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունների ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիրը:

❖ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հասարակական գիտությունների ֆակուլտետը միտված է ապահովելու իր կողմից իրականացվող կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը, իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության հրապարակմանը և դրան ծանոթանալու մատչելիությանը: Իր գործունեությամբ ֆակուլտետը ապահովելու է հասարակության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում դասախոսական կազմի և ուսանողների առավելագույնս ներգրավումը՝ աջակցելով բուհի կրթական, տնտեսական, սոցիալական, գիտական և մշակութային առաջընթացին: Կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը ֆակուլտետի զարգացման առաջնահերթություններից է:

Հասարակական գիտությունների ֆակուլտետում գործում է հաշվետվողականության սկզբունքը, որը սահմանված է ամբիոնի, ֆակուլտետի, բուհի կանոնադրություններով և կանոնակարգերով: Ամբիոնների հաշվետվությունները հնարավորություն են տալիս գնահատելու վերջիններիս գործունեության արդյունավետությունը, վերհանելու թերությունները, քայլեր ձեռնարկելու՝ դրանք վերացնելու ուղղությամբ:

Հաշվետվողականության այս համակարգը նպաստում է ֆակուլտետի կառավարման բարելավմանը. գնահատվում է կատարված աշխատանքների արդյունավետությունը, վեր են հանվում ձեռքբերումները և բացթողումները՝ դրանց պատճառները բացահայտելու, ֆակուլտետի հետագա գործունեությունը բարելավելու նպատակով:

Հասարակական պատասխանատվության և հասանելիության ապահովման նպատակով գործում են բոլոր հնարավոր միջոցները: Ֆակուլտետի կրթական և հասարակական լայնածավալ գործունեությունը ներկայացված է նաև սոցիալական հարթակներում՝ մեծ լսարանի առջև ապահովելով հանրային հաշվետվողականության գործընթացը:

❖ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հասարակական գիտությունների ֆակուլտետը հասանելիությամբ, ճկուն կառավարմամբ և առաջընթացի ձգտմամբ բաց է համագործակցության համար պետական և հասարակական բազմաոլորտ կառույցների հետ: Ֆակուլտետը ձգտում է պայմաններ ստեղծել երկարաժամկետ և արգասաբեր համագործակցության համար, ինչը նպաստելու է դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ուսանողների շարժընթացի ապահովմանը մասնագիտական ոլորտում: Համագործակցությունների ձեռքբերման գործում մեծ ներդրում ունեն մասնագիտական ամբոնների դասախոսները: Ֆակուլտետի կողմից նախատեսվում է ստեղծել համագործակից կառույցների տվյալների շտեմարան:

Բազմաոլորտային համագործակցության առավելություններն են՝

- նոր պրակտիկ համագործակցության ուղղությունների հայտնաբերում և զարգացում,
- գիտակրթական կայուն զարգացման ապահովում,
- նորարարական փորձի տեղայնացում,
- համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացում,
- գործատուների շրջանակի ընդլայնում:

Համագործակցության արդյունքում իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- «Ժեստ» հոգեբանական կենտրոնի կողմից դասախոսական կազմի և ուսանողների վերապատրաստման ծրագրեր:
- «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ ներառականության գործընթացի ներդրմանն ու զարգացմանն ուղղված ծրագրեր:
- «Русский Дом в Гюмри» կառույցի հետ համատեղ ուսանողների և դասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներ:
- «Կանանի» հասարակական կազմակերպության հետ համագործակցություն:
- Դպրոցների հետ համագործակցություն:
- Վիճակագրական վարչության, ՄՄԾ-ի հետ համագործակցություն:

- Հայկական Կարիտաս, «Տարեցների տնային խնամք և ցերեկային խնամք» ծրագրերի շահառուների, աշխատակազմի հետ մասնագիտական, մշակութային հանդիպում՝ նվիրված տարեցների միջազգային օրվան:
- Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի հետ համատեղ իրականացվել է ձեռագործ աշխատանքների պատրաստում և ցուցահանդես-վաճառք:
- Դանիել Վարուժանի անվան գրադարանի հետ համատեղ միջոցառումների շարք: «Փյունիկ» հասարակական կազմակերպության հետ աշխատանք տեսողական խնդիրներ ունեցող երեխաների հետ:
- «Խաչմերուկ» կրթական հիմնադրամի հետ միջոցառումների շարք:
- Կամավորական աշխատանք մարզում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում:
- Կամավորություն նախակրթարաններում և զարգացման կենտրոններում:
- 2019թ. նոյեմբերից մեկնարկել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից նախաձեռնած **«Նպաստել Հայաստանում՝ բոլորի համար, ներառական, համապատասխան և որակյալ կրթության կայացմանը»** ծրագիրը, որն իրականացվում է Շիրակի մարզի թվով յոթ մանկապարտեզներում և յոթ դպրոցներում:

❖ ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

❖ ՓՈՐՁՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ

Հարցի կարևորությունը պայմանավորված է ՇՊՀ-ի նոր Ռազմավարական ծրագրով (խնդիր 4-րդ՝ Հասարակական պատասխանատվություն բաժին): Որպես գործողություն՝ այն ամրագրված է **Կամավորության մշակույթի ձևավորում և խթանում բաժնում,** իսկ կատարողականի ցուցիչն է՝ **Կամավորությունը խրախուսող մշակված և ներդրված մեխանիզմները** (**Նպատակ 3՝ Հանրային ներգրավում՝ Խթանել միջազգայնացումը և սոցիալական գործընկերությունը**): Ֆակուլտետի շատ ուսանողներ կամավորական աշխատանքներ են իրականացնում մարզի պետական և հասարակական ոլորտային տարբեր կառույցներում՝ լավագույն արդյունքներ ցուցանելով, միաժամանակ հընթացս դառնալով նաև այդ կառույցների աշխատակիցները. «Ժեստ» հոգեբանական կենտրոնի՝ Գյումրի քաղաքի մասնաճյուղի տնօրենը նախկին կամավոր ուսանող է:

Ուսանողներն ամրագրված հաջողություններ են ցուցաբերել նաև փորձնակության ոլորտում, ինչը հանգեցնում է այն եզրակացության, որ հարկ է զարգացնել այս գործընթացը «Սոցիոլոգիա» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտական ոլորտներում:

Հաշվետվությունը ներկայացնելիս հետազոտել ենք հասարակական տարբեր կառույցներում՝ Նոր լույս, Ժեստ, Էմիլի արեգակ, Կարիտաս, Կանանց իրավունքների տուն, «Կանանի» հոգեբանական կենտրոն, Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, Երիտասարդների տուն, Ռեստարտ Գյումրի և այլ կառույցներում, նաև զարգացման կենտրոններում կամավորություն անող ուսանողներիգործունեությունը: Կամավորությունը նպաստում է ինքնիրացմանը, մասնագիտական փորձի զարգացմանը, ինչպես նաև հանրային կապեր հաստատելուն:

Նշենք, որ հարցի համատեքստում ամենաբարձր ցուցանիշը գրանցել են «Հոգեբանության» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունների ուսանողները: